


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պօստը 3 ՄՆԸ.
Գաւառաց 10 ՄՆԸ.
Վեցամս. Կ. Պօստը 4 ՄՆԸ.
Գաւառաց 5 ՄՆԸ.
Օտար երկիրներու 50 Ֆր.



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս դնացած լրագրաց ճանրու
ծախքը խորագրով թանկ վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրով թանկ խորագրով
- Տնօրէնին տխրի ուղղութի : Ղալա
թիս Սանտրքըլար ճառատի թիւ
198, Նորո խան, Մասիսի գրասեն
եակը :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 22 ՅՈՒՆԻԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքական խնդրոց կարգադրութիւնը կը յապաղի, թէ և բա
նակցութիւնը կը շարունակին. տա
կաւին ո՛չ Ռուսիոյ հետ վերջնական
դաշնագրութեան, ո՛չ Աւստրիոյ հետ
պայմանագրութեան, ո՛չ ալ Հելլենա
կան խնդրոյն լուծման վրայ վաւերա
կան լուր մը կայ :

Առթիւն ընելու դարը գոյուած է :
Մինչև ցարդ եղած փոխառութիւն
ներն երաշխաւորութիւն ունէին,
բայց անուանական էր, քանզի երաշ
խաւորեալ եկամտից մատակարարու
թիւնը Բ. Գրան ձեռքն էր, ի բաց առ
եալ եղիպտոսի աուրքով երաշխաւոր
ւած փոխառութիւններն : Այս վեր
ջիններուն համար ևս Բ. Գրան երբ
հարկ տեսաւ՝ եղիպտոսի աուրքին
վճարումն արդիւնց պահ մը, և 1877ի
փոխառութիւնը կնքեց մասնաւոր
պայմանագրութեամբ : Հիմոյ փո
խառուները կը պահանջեն որ երաշ
խաւորեալ եկամտից մատակարարու
թիւնն ուղղակի իրենց յանձնուի :
Օրինակի համար, պարտուց և հա
սարակային շինութեանց որոշ դու
մար մը յաւակցեալով, դումար մ'ըս
կառավարութեան յանձնեն իւր պի
տոյից և ծախուց գործածելու համար :
Բայց ինքիւր խիստ ծանր է և կըր
նայ շատ մը խոչընդոտներու հանդի
պիլ, որոց գլխաւորներն մին է վե
հապետական իրաւանց պահպանու
թիւնը : Օտար սեղանաւորներն ու կա
ռավարութիւնները շատ դեղեր կըր
նան առաջարկել, բայց ինքիւրն հոն
է թէ կրնան մեր կազմութեան
յարմարիլ, առանց որչ հոսի ուրե
մէն առաւել միաս կուտան քան թէ
օգուտ : Գժբարդբար, նեղութիւնը
լաւ խորհրդական մը չէ, և Բ. Գրան
պարտաւորուած է պարագայից անձ
կութեան ներքե կ սրծելու : Անգղի
ական կառավարութեանն օգնական
ձեռքն մը կարկառու մը խիստ հաւա
նական եղած էր. ասոր համար խոր
հըրդարանին հաւանութիւնը պէտք
եղաւ, և խորհրդարանը բացուեալն

պէս առաջարկութիւն մը պիտի ներ
կայանայ Օսմանեան փոխառութիւն
երաշխաւորելու : Բայց ասոր մեծ ընդ
գիմութիւն մը կը նախատեսուի : Կը
վախոյուի որ Հեռոքորի գաղթականաց
նպատակը համար Անգղիական կա
ռավարութեան առաջարկին պէս այս
ալչմերծու ի Մէլի երկու օրէն խորհըր
դարանը կը գումարի, և այն ժամա
նակ կրնանք գիտնուլ թէ Անգղիական
երաշխաւորութեամբ մեծ փոխառու
թիւն մ'ընելու յոյսերը պիտի ստուգ
ւին թէ բարոյովն ոչնչանան :
Մայրաքաղաքին մէջ ելուժից նա
խարարին փոփոխութիւնը թղթադը
րամին արժէքը բարձրեալու համար
Ձիւհաի էֆէնաի ըրած ջանքն անյա
ջողութեան կընծայուի : Եր նախա
բար քեանի փաշան տակաւին դործի
չսկսաւ, բայց թղթադըրամին համար
առաջարկուած միջոցները կարելի է
աւելի ընդարձակ բարենորոգման կեր
պարանք առնուն, քան զի այս խըն
դիրն ալ քաղաքական խնդիրներէ ո
չինչ նուազ ստիպողական և կարեոր
է : Բոլոր կառավարութիւնն ելուժից
բարձրման վրայ կայացած է, և թղթ
թադըրամին ներկայ վիճակն այնպէս է
որ գրեթէ վարչական մարտիւր կ'ան
դամալուծէ և կրնայ մեծ վնասներ
պատճառել : Բնդհանուր բարենորո
գում մ'անհրաժեշտ պէտք է, և բաղ
ձայի է որ Բարձր. Մեծ-Կայսրոսին
այս նկատմամբ ունեցած բազմանքն
անարգել ՚ի դործ դրուի :

խառն յանձնախորհրդին պաշտօնի
պայմանագրով կը լրանար, և կըր
ւէր թէ Բ. Գրան առաջարկեր և տէ
րութիւններն այ հաւանելուն յիշեալ
պայմանագրին երկարելու : Ռուսա
կան թերթերը փութացին յայտարա
րել թէ Ռուսական զօրաց Բուժէլի
մնայու պայմանագրին ևս պէտք է ՚ի
միասին երկարաձգի. բայց տէրու
թիւններէն ոմանք, և գլխաւորապէս
Անգղիա և Աւստրիա, ասոր հաւա
նութիւն չէին տար : Իսկ Պուլղարը,
Ռուս զօրավարաց ընթացքէն քաջա
լերուած, յանձնախորհրդին դործին
դէմ ամեն տեսակ արգելք կը հանէ
ին : Յանձնախորհրդին որոշած էր
որ Արևելեան Բուժէլի ելուժուեալն
Օսմանեան Պանքային դործակատա
րին յանձնուի. բայց երբ ելուժից
տեսուչ կարգած Պ. Ծիսիմ նահան
գական սնանկներու հաշիւներն առ
նըրու ելաւ, Պուլղարաց կողմէն լաւ
ընդունելութիւն չգտաւ, և պարտա
ւորուած էր հոսի ուրեմն ճիշտից
դառնալ : Հիմայ բոլորովն հրաժա
րելով պիտի մեկնի ֆիլիպէէն և է,
Պոլիս պիտի վերագառնայ (Օսմանեան
Պանքային մէջ իւր նախկին պաշտօ
նը վարելու : Ռուսիան Պուլղարը յաղ
թոց ելած են, և իրենց երկիրին ե
լուժուեալն ուրիշներու ձեռք չզիտի
տան : Դաշնագրութեան պայմաննե
րէն մին էր նաև որ Օսմանեան զօրքը
Պարքաններն երթայ և անկութիւններ
չինէ սահմանադ լուրը պահպանելու
համար, և եթէ Արևելեան Բուժէլի
մէջ խռովութիւն ծագէր, ընդհա
նուր կառավարիչն իրաւունք պիտի
ունենար Օսմանեան զօրքն իրեն օգ
նութեան կոչելու, որուն արդիւնուած

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՅՈՒՆ ԱՆՏԵՍԱԿԱՆ, ՆԵՐԿԱՅՆ ԵՒ
ԱՊԱՅՄԱՆՔ

(Շարունակութիւն դէպ 2231)

Ազգերնիս կրթութիւնը և ճոխացնելը,
սիրելիք, ազգերնիս գիտցող և կա
րող ընելք, երբ գիտնայ և կրնայ,
նա ինքնին կը գտնայ ընելիքը ինչ որ
ժամանակին հարկը կը պահանջէ, ին
չու՞ չընելք ինչ որ պիտի ընելք, և
ուղեմը ընել ինչ որ չեմք կրնար ը
նել, կրցածնիս ընելք, ազգերնիս
գիտցող ընելք, ազգերնիս կարող
ընելք : Անգէտ և անիմաստ չեմք
արդողին, քաւ լիցի. եթէ այլուքն
ընտր և քանիքու՞մ դարձնեմ, այնպիսի
ընտր և քանիքու՞մ ունիւրութիւն
մը կը նշմարեմ, որպէս ևս հաղիւ թէ
Եւրոպական մայրաքաղաքաց մէջ տե
սած եմ : Ազգիս մէջ եղած և կե
նակցած ժամանակն, ս ալ ազգայնոց
մտաւորական յառաջդիմութեան
արդասիրը կը նշմարեմք. եթէ ընա

կան հանճարն ալ դիտեմք, ևս ա
ռաւել միտիմարական է մեր վիճակը
երբ յեւրոպայ էի, ստեղ մտայց մէջ,
երբեմն ալ բարեկամաց և ծանօթից
առջև կը սարձենայի մերադէպից յա
ջողութեան վրայ, եւրոպացոց
հետ բաղդատութիւններ ընելով :
Յիրաւի ալ, ունիւրութիւնը իմ, եթէ
աւնուք Եւրոպացի շինական մը, որ
իւր գիւղին մէջ ունի նախնական
վարժարան մը, բաւական ուսեալ
քահանայ մը, քննեալ մէկ կամ եր
կու դասատուս, որ մանկութեան
ժամանակ վարժարան յաճախեր է,
և քիչ շատ ալ կրթեալ տանուտեարց,
պաշտօնակալաց, բժշկի և ոտիկա
նութեան գլխաւորին հետ տեսակ
ցած է, որ մերձակոյ քաղաքները իջ
նալով աւելի ընդարձակ մտաւորական
հորիզոն մը նկատուած է, և այսպէս
աւելի ունեցած է իր բնական կա
րողութիւնները մարդը և կատարե
լազործել. և ասոր ներհակ աւնուք
մեր Հայաստանի ամենէն խեղճ աւ
զերէն գեղուկ մը, որ չէ թէ իւր

գիւղին՝ հայաւ և ոչ հարիւր մղոն շըր
ջապատի մէջ վարժարան մը տեսած
է, որուն գիւղին եկեղեցականն և
պաշտօնակալներն ալ ուրիշ բնակչաց
համահաւասար անուս են, որուն
գիւղին մէջ թերևս միմիայն գիւրքը
եկեղեցոյն աւետարանն է, որ իւր
գիւղէն ընտիր գիւղ կամ քաղաք տե
սած չէ, և այդ երկուքը դէմ առ
դէմ բաղդատէք, վտառութեամբ
և անձնական դիտութեամբ կըրեմ
թէ շատ աւելի ուշիւմ և մտացի բան
գիտցող և խօսք հասկցող կը գտնաք
Հայ գեղուկը քան թէ Եւրոպացի
չինականը : Բայց ստիկայ բնական
տողանդոյն միայն գովեստն է, ար
դեանց գովեստ չէ, մանաւանդ թէ
գովեստ ալ չէ. քանքարթաբոյց ծա
ռայն ալ ունէր իր ձեռքը իրեն
արուած գրամոյ տաղանդը, բայց
չգովուեցաւ իւր արիւրձին :
Պէտք է որ մեր Հայոյն մտաւորա
կան տաղանդը շահեցնելք, և ասոր
համար ալ նախնական, երկրորդական
և բարձր վարժարանաց պէտաւնեմք :

Այսօր Հայիական գաղթականութեանց
գլխաւոր քաղաքաց մէջ նախնական
վարժարաններ ունիւրք, կոստանդնու
պոլիս, որ այս քաղաքաց առաջինն է՝
կընծայէ մեզ բաւական թուով նախ
նական վարժարաններ. գրեթէ թաղ
ու արուարձան չկայ, որ վարժարան
մը, և նաև ըստ պիտոյից երկուս ե
րիս և աւելի ալ վարժարաններ չու
նենայ : Բայց բաւական է այսպիւր
ո՛չ, տեւրք իմ և սիկնայք : Երկու
հարիւր հազարէ աւելի բազմաւոր
հասարակութիւն մը, որուն մէջ իրա
նական և ունեւոր, կարող և ազդե
ցիկ, իշխանաւոր և սեղանաւոր ան
ձեր ալ քիչ չեն, չկրնար գոհանալ
նախնական վարժարանօք բարէ, շատ
նախնական, որոց մէջ ոչ ամենուրեք
մուտ գտած են նոր ոճերը և նոր մի
ջոցները, և գրեթէ բնաւ իսկ չէ ո
րոշակի չափուած յառաջադ իմութեան
գլխաւորը : Շատ մասնաւորութեանց
մէջ չմանելու համար, կը գոհանամ
Ռուսական խորհրդոց ու շաբաթու
թիւնը հրուիրել տոյն կէտին վրայ :

Քր սակայն ինքնօրէն դառաւ ին մէջ բնակիչ Պուլղարք դաշնագրութեան այս խառնաչափի կէտերուն ևս մինչև ցարդ յաջողութեամբ զիմադրեցին, քանզի ոչ Արևելեան Բուսնի ընդհանուր կառավարելը տակաւին կարգուեցաւ, և ոչ Օսմանեան զօրքն ՚ի մօտոյ Պալատները պիտի երթայ:

Ֆիլիպէի Պուլղարայ քաղաքապետական խորհրդոյն Ռուս զօրավարաց առած մէկ պարահանդէսին առթիւ, Պուլղարք ուղերձ մը ներկայացուցին, ուր կը խոստովանին թէ անկարելի է որ իրենք միայն իրենց զօրութեամբ կարենային անկախութիւն վաստակել, քան զի քաղաքական նապէս մեռեալ էին, բայց իրենց ազատութիւնը պարտաւոր են միայն Ռուսիոյ, որ իւր հզօր բաղիօք օգնութեան հասաւ իրենց: Այսուհետեւ, կըրտն Պուլղարք, իրենց և Ռուսաց մէջ անբուժանելի կապեր պիտի հաստատուն Պուլղարայ այս յայտարարութիւնը կարգարայնէ այն կարծիքը թէ Ալալայ միութեան հետեւանքն է Ռուսիոյ ազդեցութիւնն ու տիրապետութիւնը տարածելը: Որչափ Լորտ Պի. քոնսիլիտ աշխատեցաւ Ալալայութեան սահմանը սեղմել Արևելեան Եւրոպոյ մէջ, ա՛յնչափ ևս Պուլղարք զայն ընդարձակելու կ'աշխատին Ռուսիոյ օգնութեամբ:

Թուրքո-Ռուսական դաշնագրութեան ինչ ինչ կէտերուն նկատմամբ Բ. Դրան և Ռուսիոյ դեսպանատան միջև կատարեալ համաձայնութիւն դեռ չէ գոյացած:

Կըրտի թէ Ռուսական կառավարութիւնը կը պահանջէ որ Օսմ. դերեայի ծախսը համար վճարուելիք գումարը մինչև յիշեալ գերեաց թուրքիս դրուելու թուականը հաշուելիս Բ. Դրան յայտարարելով թէ Այսթիֆանտի դաշնագրութեան ըստորագրուելէն յետոյ Օսմ. դերեայ Ռուսիա մնալուն քարտեզաւ մը չէր մնայած, կ'ուզէ որ մինչև ստորագրութեան թուականն եղած ծախսը միայն վճարէ:

Արևելեան Բուսնիի կազմաւորութեան զբաղող Եւրոպական յանձնաժողովին պաշտօնը դեռ աւարտած չլինելուն պատճառաւ երեք ամիս ևս երկարած գուրդն ասիւ տալ ծանուցուած էր: Վերջին տեղեկութեանց նայելով, տեղութիւնը նոր պայման

նաժամ չեն որոշած, այլ խորհուրդ որ յանձնաժողովը մինչև իւր պաշտօնին վերջը պարտի նկատերը շարունակել, անսահման կերպիւ երկարած գում են պաշտօնէն անսղութիւնը:

Արևելեան Բուսնիին եկած նամակներէ առնելով վազը կը ծանուցանէ թէ Ռուսիայիք Անդրիանուպօլսէն զօրք կը դրկեն Ռուս-Ֆիլիպէի և Գըրք-Ֆիլիպէ: Շիրքայի մէջ ալ ամբողջ իւններ կը շինեն և Պուլղարքի ճանապարհը 17 հատ խոշոր թեղանոթ ըրերք են:

ՀՆՈՍ.ԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ (ՀԱՎ.ՍՍ)

Փարիզ 31 յունի. Հանրապետութեան նորընտիր նախագահ Պ. Կրէվիտեղ Պ. Կամպիլիտ և Բուսնիական ժողովոյն նախագահ ընտրուեցաւ՝ 403 քուէարկուց 314ին քուէով:

Հանրապետութեան նախագահն և Բուսնիական ժողովոյն նախագահը պարտաւոր են պիտի զրկուին և երեսփոխանաց ժողովներուն, որք իրենց գումարումը մինչև այն օր յետաձգած են:

Գետաբնական փոփոխութեանց նկատմամբ այլ ևս զբոյժող կը պտուտին, բայց դեռ ստոյգ բան մը չկայ:

Ֆարիզ 1 փետր. Տիւֆօրի նախարարութեան հրատարակուած հաւանական է:

Բերդսուրի 1 փետր. Նախարարաց մասնախորհրդին ելրակացութիւնը, որ կայսրէն ընդունուած են, կը արտադրեն թէ Վիլիամսիս զիւզն, ինչպէս նաև ՚ի հարկին ուրիշ զիւզեր, պէտք է այրին և բնակիչները ցրուին:

Ճանապարհի դէմ ձեռք տանուած ըլլալ միջոցներուն գործարարութիւնը Լորտ Մէլքիօնի գործադրին յանձնուեցաւ, որ անմիջապէս այն կողմերը պիտի երթայ սոստամանակեղ ընդհանուր կառավարելի կազմաւոր իշխանութեամբ:

Ս. յոստոն-ը հասած հեռագրէր Փարիզ 2 փետր. Պ. Տիւֆօրի հրատարակուած անդառնալի է:

Նախարարութեան մէջ մտաւ համար Պ. Տիւֆօրի եղած ամեն թախանձած անյաջող կրկնելով, հանրապետութեան նախագահն արտաքին գործոց նախարար Պ. Վատիկիօնի յանձնեց նոր նախարարութիւն մը կազմելու գործը:

Գահիրէ 2 փետր. Նախարարութեան մէջ անհամաձայնութեան զրոյցները բացարձակապէս սուտ հանուեցան:

Պետական կառուածները Պ. Բօլիտի գրաւական տարւո պայմանագրութիւնն երկ կ'ստորագրեցաւ:

Նիւ 2 փետր. Վերսիլիական երեսփոխանութեան յանձնաժողովն հրէից նկատմամբ օրինաց մէջ կեցած խորթութիւնները բառապարտ վեր

բարեկալ ճրագիրն ընդունեց ստանց մեծ ժողովոյն հաւանութեամբ:

Վիլնոս 2 փետր. Մոսկու Ռոզիւ շարափաթ երթին արած տեղեկութեան նայելով, Աւստրիոյ և Գերմանիոյ միջև պայմանագրութիւն մը կըրուած է, որով Աւստրիա կը հրատարակէ Գրակայի դաշնագրութեան ճիշտ յոգումն արտադրութեան գործարարութիւնը պահանջել, որ հրատարակին Նիւս-միկի վերադարձը բնակչաց ընդհանուր քուէին կենթարկէ:

Պաշտօնական լրագիրը փետրվար 1 թուականաւ նախարարական հրամանաւ զիւր մը կը հրատարակէ, որ Ռուսիոյ բազում վաճառաց ներածութիւնն ու փոխադրութիւնը կարգելու՝ Աժուրիական նահանգին մէջ ճարակեալ ժանտախտին պատճառաւ:

(ՐԱՅՓԵՐ)

Լճորա 3 փետր. ձէլաղագածէն տնտեսած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Եսգուլ խան Անգլիացեաց առաջարկած հաշտութեան պայմանները չընդունին յայտարարելով թէ հաստատութեամբ որոշած է իւր հօրը Շիր Ալի խանին հրամանները գործադրել և Գապուլի մայրաքաղաքը մինչև ցետին կէտ պաշտպանել:

Լճորա 1 փետր. Օսմ. Բօնո. 42 Փոխ. 1865 45 1/4 4869 45 1/8 1871 53 3/4 1872 22 1/8 1873 13 Կրիստո. 70 Անգլ. Բօնո. 95 5/16 Փարիզ 1 փետր. Օսմ. Բօնո. 11,82 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ներքին գործոց նախարար Գաւրի Կալան, որ քանի մը շաբաթ առաջ Պալատէն ճանրայ ելած էր, այսօր մայրաքաղաք կապառու Աւստրիական շոգեհատով:

Բախուղայի Օսմանեան հիւպատոս Տանիլ Էփէնտին, որ Բուսնիոյ ցայի խնդրոյն բանակցութեանց մէջ մեծ դեր մ'ունեցած է, ուրախ թը մայրաքաղաքս եկաւ, հաւանական անբար նոյն խնդրոյն վրայ նոր հրահանգ ստանալու:

Կը հաւատեն թէ Թօքիլլ Մարքիլին ներկայացուցած ելրուական ճրագիրն, որոյ վրայ մեր ուրբաթ աւուր թիտով խօսած եմք, սկզբամբ ընդունուեր է Բ. Դրանէն, և Օսմ. պարտուց միացման պայմանագրութեան մը հիմունքն որոշուեր են:

Մոյն միացեալ պարտուց տոկոսները մըրանք-Անգլիական ընկերութեան մը կողմէ պիտի վճարուին, մարտտանց հասցիները կամ ըստ ամանց վարութիւնն յիշեալ ընկերութեան յանձնուելով:

Ազգին և վարչութեանց իրենց յանձնած պաշտօնը միայն վարժարանաց մատակարարութիւնը քննել և վարժապետաց վէճերը լուծել չէ, հարաբուն դատարարութեան կերպը, ոճը, միջոցները և յառաջադիմութիւնը հօգաւ: Բայց աւել մեծ պէտք մ'ալ կայ:

Քանի քանի հայրեր և մայրեր խօսից մէջ յայտնած են թէ շիտիտի և շուարած մնացեր են, վասն զի տըղաքին նախարարական վարժարանաց ընթացքը կատարելէն ետքը չեն դիտար ուր դեռեցել, որպէս զի ուսման քննին կատարելագործեն, և երկրորդական ուսմանց դաստիարակութիւնն ալ ընդունելով գործի մը գլուխ կարենան անցնել: Այդ վիճակին մէջ թերեւս ունկնդիր Տեառնդէ. Տիկնայցը մէջ ալ գտնուողներ կան: Հայը որ մայրաքաղաքիս մէջ ազգութիւն մը կը կողմէ, մանաւանդ թէ մէկէն ալ աւելի, բնաւ երկրորդական վարժարան մը չունեցաւ և դեռ չունի: Չկայ վարժարան մը որուն ա-

ռաջին կարգը նախարարական զբոյժողաց ուսումնաւարտ աշակերտներէն բաղկանայ, և ուր որոշեալ նիւթոյ վրայ քննութիւն չտուած մէկը ընդունուել չըլլայ: Անն վարժարանն և ուսնողուն փոխաբայով մը պարտքնէն կսկսի և անտիական մանկիկները հաւաքելու և պատասխարելու կ'աշխատին:

Յայտարարութիւններ և ճրագիրներ կարգացած եմ՝ ուր երկրորդական ուսմանը կը խոստացուին և ուսումնաւարտ աշակերտաց Եւրոպոյ համո-լարարանները մտնալու շախ կարողութիւն ստանալին կ'աւետարայց դժբաղգաբար խոստմունք և աւետիք յայտարարց թերթերէն գուր չեն ելլար: Կեդրոնական վարժարանի մը ՚ի Ղալաթիս հիմնարկութիւնը չեմ դիտար ինչպէս այդչափ կերկարի. բայց և ոչ ալ դիտեմ թէ կեդրոնական վարժարանը յիշեալ կարօտութեան դարման պիտի ըլլայ: Թէ նախարարական վարժարանաց թիւը միտլ ևս պիտի շտայնէ: Ար-

դեօք այնպիսի ճանր դժուարութիւն մը կայ ՚ի մասին, որ ամեն ազգային հաստատութիւնը այդ հարկէն չեն զերծանիր: Ահա և վիճեալ Պալատէն կ'աւարելու գաղափարն և Բարիլու գաղափարն որ այսչափ դիւրութիւններ և միջոցներ ունին իրենց ձեռքը, փոխանակ երկրորդական վարժարանաց կարօտութիւնը լեցնելու, կը վերադառնան հայ այրուբները ուսուցանել յօտար երկրի, ուսումնաւարտ աշակերտներ կը վերադարձնեն նախարարութեան հիմնութեամբ միայն: Հայուն ապագայն եթէ բարձր է, այդ բարձրութեան ելլալու սանդուղին մէկ ստիպ ալ ՚ի երկրորդական վարժարան մի պիտի ըլլայ, որպէս զի ազգային երեսաւարքը քիչ մը ևս զարգանան, և վաճառականութեան և արուեստից, զբանսեկաց և գործարանաց համար կարող և պատրաստական անձեր ունենալը: Եթէ նախարարութեան, բժշկագիտութեան և համարողագիտութեան և

Առկէց զատ՝ յիշեալ ընկերութիւնն ու թ կամ տան միլիոն լիւրա փոխ պիտի տայ Բ. Դրան անհրաժեշտ պետայից և մանաւորացէս թղթագրամաց բարձման համար:

Բ. Դրան այս ճրագրին ինչ ինչ կէտերուն համար բարեփոխութիւններ առաջարկած լինելով, Պ. Թօքիլլ յիշեալ մըրանք-Անգլիական ընկերութեան կարծիքն ստանալու համար անցեալ շաբաթ փարիզ գնաց:

Թունուզի պատերազմական գործոց նախարար Րիւսթէմ պէյ Վեհ-Սուլթանին կողմնէ Կ. Պօլիս հրաւիրուեցաւ:

Սթանպուլ լրագիրն, որ ութ օր առաջ երեք ամիս դադարման դատապարտեալ էր, շաբաթ օրէն ՚ի վեր վերստին հրատարակիլ սկսաւ:

Յիշեալ լրագիրն այս առթիւ կը ծանուցանէ թէ կառավարութիւնն որոշեր է այլ ևս բնաւ լրագիր մը դադարման չենթարկել մինչև որ այս պատիժը նախարարաց խորհրդին մէջ որոշուելով գործարարութեան հրաման չընէ:

Լրագրաց նկատմամբ սրուած այս որոշումն ազատական գրութեան մէջ նոր քայլ մ'է Բ. Դրան կողմէ, և իբրև այն խորին շարահայեաց արժանի: Սթանպուլ մեղ յուսալ որ Մեծ-Եւրոպոս Բարձր Խորհրդան իրապի պաշտօնավարութիւնն այսպիսի ազատամիտ գործերով նշանաւոր էլ մը կը դրաւ և Օսմանեան պատմութեան մէջ:

Հրապարակը գտնուած թղթագրամաց քանակութիւնն յայտնելու համար Օսմ. կայսերական Պանքան պարզ և մանրամասն ցուցակ մը զըրկած է լրագրաց, Այն ցուցակին նախելով, շրջաբերութեան հանուած թղթագրամները մէկ երկիկուն 600 միլիոն զրուշի (այսինքն 16 միլիոն հարիւրնոց թղթագրամի) գումար մը կազմած լինելով, մինչև անցեալ ուրբաթ օր այլ ևս սլ եղանակներով 108 միլիոն 751311 զրուշի կամ մէկ միլիոն 87513 հարիւրնոց թղթագրամ շրջաբերութիւնէ վերցուեր ու ջնջուեր է, որով հասարակութեան ձեռքը 1 երկիկուն 491 միլիոն 248489 զրուշի կամ որ նոյն է՝ 14 միլիոն 912485 հարիւրնոց թղթագրամ մնացած է:

Կէլլալուի դաւառէն արմախք հանելու արգելքն, որ յունկարի վերջը կը լրանար, երկու ամիս ևս երկարած գեցաւ մինչև մարտի վերջը:

այլ բարձր ուսմանց մտնալու յարմար աշակերտներ գտնուին, առանց կարօտ ըլլալու կարևոր հանուածութիւնները օտար լեղուով և օտարազգիներէ ընդունելու: պարագայ մը որ ոչ թէ միայն մեր ազգասէր և անձնասէր զբայմանց շարմարի, հայա այն հրահանգները միշտ դժուարամտաւ ի կրնէ ընդհանրութեան, և սակաւ բաղդաւորաց միայն կը վերապահէ:

Քանի որ բոլոր Օսմանեան հպարտակ Հայոցս կեդրոնը մայրաքաղաքիս մէջն է, թէ պետութեան և վարչութեան, և թէ թուոյ և կարողութեան նկատմամբ, երկրորդական վարժարանին առաջինը պիտի է հոս հաստատուի: Եթէ այդ նպատակին համար քանի մը նախարարութեան խորհանք, կամ թէ հին հաստատութեանց ինչպէս Կոստան-Շահնապարեան հաստատութեան նոր ձև մը տալ կամ թէ եղած և ըլլալիք բարեբերութեանց գործածութիւնը բարեփոխել ալ հարկ ըլլայ, կարծեմ

Կիրիլոսն առնուած լրոջ նայելով կըզոյն ընդ հանուր ժողովն, որ կիրիլի կուսակալ Գոթիաթէս վաշայի նախագահութեամբ ամսոյ 21 թին իւր առաջին նիստն բրած էր, ինչ ինչ մասնաւոր խնդրոց կարգադրութեան նէ յետոյ, կըզոյն պիւտոթէին ծըրադրին համեմատ, կիրիլա կըզոյն յառաջիկայ տարուան ծախքը 10 միլիոն 700 հազար դր, և եկամուտը 9 1/2 միլիոնի չափ հաշիւ եղած է, ոչ զբրամ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒՍ

Table with financial data for Constantinople, including items like 'Այս առաւել բացուեցաւ' and 'Քրիստոսի Երկարութեան' with corresponding values.

Օտմ. կայսերական Պաշտան այսօր 420 զին սորոց է փոխանակութեան

Ա.Չ.Գ.Ա.Յ.Ի.Ն

Վանէն Պատրիարքարան եկած պաշտօնական տեղեկագիր մը հարստահարութեան, բռնութեան, առեւանգութեան, յափշտակութեան և աւարաւորութեան դէպքեր կը ծանուցանէ, որք յիշեալ գաւառին այլ և այլ կողմերն յաճախ կը պատահին և անպատիժ կը մնան:

Բերիայէն հասած վերջին տեղեկութիւնք կը ծանուցանեն թէ Բերիայ մէջ բանտարկեալ Ուլնեյի ազգայիններէն ութ անձինք անձանօթ հիւանդութեամբ մը մեռեր են:

Մանրամասնութիւնք դեռ հասած չեն: Շարաթ առ ուր Մէնէնքը մէջ հետեւեալ տղերք կը կարգաւոր. « Հայաստանի Օտմ. գաւառներէն վերջին օրերս լուրեր առնուած են, որոց նայելով հասարակաց անդրաբու թիւնը միշտ անկանոն վիճակի մէջ է այդ տեղերն, որք թիւրաբար և ուրիշ աւաղակաց անդուլ չարագործութեանց ապարեղ եղած են: »

ԹՊԹԱԿՑՈՒԹԻՆԵՔ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Իր մի 13 յունի 1879 թ. . . Խորագիր . . . Զարմանալի բան է. աշխարհի մէջ ամեն ինչ դադար ունի, բայց բարոյն և շարին, լուսոյն ու խաղաղութեան, նորին եւ հինին պատերազմն ամենին դադար չունի: Մեր Զմեռանքն ինչ որ արեւ առաջ անորոյ պատերազմն ունի, այսօր որոյ կերպարան մը կանուտ նոյն պատերազմը կը կրկնուի իր ստեղծութեան ժամանակէն ի վեր: Եւ ինչ որ արեւադարձութեան ի վեր լազարուեցանք և արեւմտաւորեցանք, ինչ որ արեւմտեան ժողովն կը քաշեն, Գաւառագործութեանց կողմ չկայ. Բայց և արեւմտեան իրեր եղաւոր կը տեսնուին. միայն քանի մը հատ Բիւրջն ուսուցիչներու խորտակմը կայ, որ Արշալուստ մը ընդու մերթ մերթ իր ձայնը կը բարձրացնէ, ամեն տեսակ զոյն ու կերպարան անկող, բայց ի ճշմարտութեան մէջ և արդարաւորութեան: Նոյն խլըրտումը կը ծեւանայ առանց կըրօնի, քրտոյնէր՝ առանց բարոյականի, ազգասէր՝ իր փորին ու շահուն համար և ոչ երբէք ազգին:

Ստեղծութիւնք կան և բաւական ծանօթութիւններ ալ հաւաքեցին և հազարեցին վերջին տարւոյն մէջ մասնաւոր պաշտամամբ խաղաղութեան Արժանապատիւ և փութալան վարդապետներն: Ասոնց տըւած տեղեկութիւններուն համեմատ առաջնորդանկատ քաղաքը քանի մը նախակրթարաններ ունին՝ մեծապէս բարեկարգութեան կարօտք. աւաններէն ոմանք միայն խեղճ մէկ դըրուրոց մը ունի, դպրոց կըսեմ՝ ուրովհետեւ եկեղեցւոյ մէջ դպրութիւն ընելու կարողութիւնն սոյն հաստատութեանց զխաղաղութեան է. իսկ գիւղերուն մէջէն վարժարանի ստուեր մի ունեցողն ալ հազուադէպ է:

Թաւրոյ Խորագիր . . . Ստեղծութիւնք կան և բաւական ծանօթութիւններ ալ հաւաքեցին և հազարեցին վերջին տարւոյն մէջ մասնաւոր պաշտամամբ խաղաղութեան Արժանապատիւ և փութալան վարդապետներն: Ասոնց տըւած տեղեկութիւններուն համեմատ առաջնորդանկատ քաղաքը քանի մը նախակրթարաններ ունին՝ մեծապէս բարեկարգութեան կարօտք. աւաններէն ոմանք միայն խեղճ մէկ դըրուրոց մը ունի, դպրոց կըսեմ՝ ուրովհետեւ եկեղեցւոյ մէջ դպրութիւն ընելու կարողութիւնն սոյն հաստատութեանց զխաղաղութեան է. իսկ գիւղերուն մէջէն վարժարանի ստուեր մի ունեցողն ալ հազուադէպ է:

Թեան մունտիկ ու քարոզ դարձուցած են, թէ երբեք սոյն դժգոհութեան չարժանիք կը համարին իրենց կարծեցեալ ազգասիրութիւնն, բայց խնդիրը պարզ է և ամեն մարդ կարող է հասկընալ: Ներկայ առաջնորդին օրով սոյն անձինք պարտաւոր չկոչուեցան ազգային վարժարանաց մէջ, որուն անուշա կ'անկեալ էին, մանաւանդ առաջինն, որուն վարժարանի մէջ էր Գեր. Առաջնորդն կըբաւհարութեամբ. բայց Գեր. Առաջնորդին փորձեալ արդարաւորութիւնն երբէք չընեցեր անընդունակ անձերու պատճառըլով պաշտօն ընդունելու, թէ երբեք բարձր անգամ ըլլան, թէ և կարօտ վիճակ ունենան, մանաւանդ որ ամեն գործեր ժողովոց և խորհրդոց որոշմամբ կը կատարուին և ոչ թէ առաջնորդի հրահանաւ, ինչպէս որ կը կատարուէր ի հնումն ամեն տեղ: Արդէս զի չկարծուի թէ վայրագար կը խօսինք և այդ անձինքն այդպիսի նպատակ և շարժանք չունին, պատահեց իրողութիւնը:

Զմեռանքն այսօր ունի սահմանադրական ընդհանուր Գաւառական ժողով 55 երեսփոխաններ, ունի կրօնական ժողով 5 և Գաւառական ժողով 7 անդամներով, ունի Տնտեսական և Գաւառական խորհուրդներ 5 ական անդամներով, ունի Հրահանգանցի Հոգաբարձութիւն կամ Առաջնական խորհուրդ 7 անդամներով, ունի նաև մասնախորհուրդ մը, զոր Գաւառական ժողովը որոշած է կազմել 5-7 անդամներով, ազատացի զինակը բարեբեւութեամբ ըսել է թէ այսօր Զմեռանքն ազգային գաւառներէն զիւրիւր 60 անձինք ազգային գործոց համար կ'աշխատին և ամեն ժողով կամ խորհուրդ չարթն երկու անդամ նիստ ունի, թողունք արտաքին կարգի նիստերն, թողունք մօտ օրերս հրատարակուած համարատուութեան տեղեկագրերն, որոց մէջ անհերք կը տեսնուին թէ ինչպէս և ամեն ժողովական ու խորհուրդական ձրեալէս ու ետանդուն սիրով կ'աշխատին ազգին համար, և ինչպէս պատասխանատուութեան գրացուծով վառեալ են, որ օրինակութեան գլխաւոր մէկ փորձաբարն է:

Այս կենդանի իրողութիւնները չեն տեսներ Սաւառական և Վանադեցիք: Այս կենդանութիւնը չեն նշմարեր, չեն զգար, չեն հրատարակեր, Վարչութեան և վարժարանաց տեսչութեան տեղեկագրերներուն վրայ դժգոհութեան բառ մը չեն արտաստեր, այլ միշտ պարտաւոր, միշտ նենդամիտ դատողութիւն, միշտ կոյր նախանձտուութիւն, և այս ամենէն կ'երեւի որ իրենց կէտ նպատակին իրենց անձն է և ոչ այլ ինչ:

Արդարութեան պարտք մը կը համարենք ըսել, որ այս ժողովոց և խորհրդոց կազմութեան գլխաւոր պատճառն մեր հեղ, բարեբաղոյ և խոհեմ առաջնորդն է, որ ամեն ազգի մարդոց համարութիւնը կը վայելէ, բայց ի Սաւառականէ, Վանադեցիքէ և իրենց քանի մ'արքանեակներէ, որ արդէն համարութեան և մարտնչութեան համար ծընած մարդիկ չեն, այլ խաղաղութեան, որովհետեւ զրախօսութեան, մեծարանութեան համար:

Գեր Առաջնորդը, կամ իր օրով կազմուած ազգային ժողովները, խորհուրդներն ու հողաբարձութիւններն ինչ թըլընամանք հասուցած են այդ անձերուն, ինչ մնա հասուցած են ազգին, եկեղեցւոյն, ազգային վարժարանաց, ազգային հաստատութեանց, ազգային եկամտից, ազգային պատուոյն որ այսպէս հակառակ կը խօսին ու կը գրեն Արշալուստ մէջ և կը ըման իրենց սուտերն իրրեւ ճշմարտութիւն ծախել, զայնակ դուրս սերմանել ազգի հասարակութեան մէջ, Առաջնորդի, Վարչութեան և վարժարանաց համարան արատաւորել անամօթ յարձակումներով, և այսպէս անվարժութիւն սերմանել ազգին մէջ առաջնորդն, առ վարչութիւնն, առ տեսչութիւնն զպրօցին, որպէս զի ամեն ընտիր սիրտ վիրաւորեն, ամեն բարեկարգութիւն խանգարեն, ամեն յառաջադիմութեան արդեւ ըլլան և ի վերջէ իրենց դերը խաղան:

Ժողովներու կը նախագահէ՝ որք երևի իր ժամանակին կատարելու համար, եկեղեցւոյ մէջ քարոզներ կը խօսի, որոց հանուածութեամբ ունիկողի կը ըլլայ Զմեռանքի ժողովուրդը, և մեծատան և աղքատին հետ առանց խարսխեան հեզօրէն կը առնուի Տակաւին իւր առաջնորդութեան երկու տարին չըրացած՝ Ազգն հոյակապ չիւանդանոց մ'ունեցաւ Սարգսյան համարադատաց շնորհիւ, եկեղեցին այսօր առաջաւորութեամբ Գարադաշեան Խաչատուր աղայի թողունք ուրիշ բարեկարգութիւններն չու ձեռնարկութիւններն, որք ազգային վարչութեան տեղեկագրին մէջ նշանակուած են:

Ինչ պիտի ընէին Գեր. Առաջնորդն ու ազգային վարչութիւնը հրահանգ պիտի գործէին կամ կոյրերուն աջք տալու էին, նախանձով մեռածներուն կենդանութիւնն տալու էին: Երանի՛ թէ ունենային այդ կարողութիւնն և ամենին առաջ Սաւառականներն ու Վանադեցիքն սկսէին:

Սմոթ, հարցար մտնի, որ Արշալուստեանք ներկայ առաջնորդութեան ու վարչութեան այս ամեն արարքներն անտես ընելով՝ արդարութեան ու ճշմարտութեան դէմ մեղանշեցով, մարդիկ վիրաւորելու գնն իրենց սուտերով ու նենդա պատիր հրատարակութիւններով. սակայն թող իմացած ըլլան Սաւառականն և ընկերք, որ իրենց կատարած դերն ոչ միայն վատութիւն է և անձնական անարգ շահագրգիռութիւն, այլ յայտնի ազգամատուցութիւն: Թող իմացած ըլլան սր ազգային վարչութիւնը քով ճանաչելով այդպիսի անձանց զազանիքն ու յայտնիքն, մինչև ցարդ արժէք տուած չէ իրենց գրարանութեանց և այսուհետեւ ևս արժէք պիտի չտայ, այլ անդորր ու խաղաղ հոգւով պիտի կատարէ իր պարտաւորութիւնը՝ չորք խորտակել իր հեղահամար ու արթնութեան Առաջնորդին, որ զիտէ իր երկինքն Վարչութեան համարել, ամեն թշնամանաց տակալ, մարդկութեան բարոյն համար, իր ազգին օգտին ու յառաջադիմութեան համար:

ՄՐԱՀ ԷԼՏՐԱՍՏԻ

Զորեշաքի, 25 Յունի 1879, 4:1/2 Ժ

ՄԵՐ ՊՐԱՀԱՆԳԻՍ ԴԻՄԱԿԱՆՈՐ ԵՒ ԱՆԴԻՄԱԿ Ի ՆՊԱՍՏ ԳՊՐՈՅԱՍԻՐՈՅ—ԱՐԵՒԵԼԱՆԵ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴ ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԱԿՈՐՈՒԹԵԱՄԲ ՎԵՐԱԳՈՒՅՈՒՄ ՍԵՐ ՕՍԵԿՆ Է. ԼԵՑԱՐՏԻ ԴԵՍՊՈՒՄ ԲԵՐԿԱՆԻՅ

- Մերոյ Կարգադրել Մանուկաւոր Նախագահ. — Պ. Մ. Հ. Գոսթըր. Կայսերական Կան Պանքայի Ընդհ. տնօրէն. Կան Պանքայի Ընդհ. Զածեան. Գարտուղար. — Յակոբ Գաղաղեան Մեծ. Աստուածատուր Է. Զուրաբ. Աւետիս Է. Գոյոյեան. Բարսեղ Է. Հալաճեան. Գլորի Է. Արշալուստ. Գլորի Է. Սամանեան. Գրիգոր Է. Վիւսիչիչեան. Միքայիլ Է. Մոմճեան. Միքայիլ Է. Փորթուգալեան. Յովհաննէս Է. Նուրեան. Սարգիս Է. Սվաճեան. Սեպուհ Է. Մադուտեան. Վենսան Է. Ալիան. Վենսան Է. Ապտուլա. Տիգրան Է. Կարակոչեան. Տօթթօր Է. Փէշտիմաճի:

Ի Լ Ա Ն Նիդոյիցէ տեղապրանքայից Սաւառականէն ինչն լուրերն օրուայ միւ պայտա օրուանոց օլան օն իքի պին օգգա պարզ եղանքն իւր պին օգգաւ թարիլի դարարընտա հէման վէ գուտուր տախի շէհր իքիչք պին օգգա թէսիմ օրուարագ արգասը այլնաղ վէ համար վէրիչ 65 ք

մագարուդ սենեակներն վերադարձնելու... ամենախնայող կերպով օգտագործելու...



ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԼԵԻ ՇՈՂԵՆԱԻՆՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՆԵԿԻ ԺԱՄՆԵՐԸ

1879 ՅՈՒՆԻՎԵՐՍԻ ԵՐԿՈՒՇՄԱՐԹԻ ՕՐԻՆ ՍԿՍԵԱԼ ՄԻՆՁԵՆ ԾՈՂԵՎԱՐ 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՂԵՆԱԻՆՆԵՐԸ

Table with 3 columns: No., Name, and Amount. Lists various names and their corresponding values in the Bosphorus section.

ԱՐՆՈՒՄ ԵՂԵՐԷ

Table with 3 columns: No., Name, and Amount. Lists names and values in the Arnum section.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՊԱՏԻՆԵՐԱԶԱՐԻ ՊԱՏԻՆԵՐԱԿՈՒՆ

ՍՐԵՆԵՆԵՆՆԵՐ ՊԱՏԻՆԵՐԱԿՈՒՆ

Թարգմանեալ ի Գեղարքունիք

1876—77 ի Արեւելեան պատերազմին պատճառով ինչպէս որ...

Քաղաքէ մեզ յուսալ որ մէն մի ազգային նոյն պատերազմին...

Կը դանուի Ուղղուն շարքը Ֆրէնկեան գրատունն և ուրիշ Հայ գրատունն...

Գին թերթին 1 զըն արծաթ դրամ:

ԴԱՄԱՐԱՆ

ՁԵՐԱԶ—ՏԵՄԵՐԱԿՈՒՆ

Ինչպէս անունն արդէն կը յայտնէ, այս մասնին կը տեսնուի...

ԲԱՆՍԱԼԻ

ՀՈՅՆԵՐԸ ՇԱՐՔԱՐՈՒԹԵԱՆ

Գրեց Մ. Մամուրեան

Այսու ասիկ զեղեցիկ մեթոտ մը, որ Մամուրեան էֆենտի աշխատանքով...

ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ

Յօրինեց Մ. Մամուրեան

Բազմաձևուտ Մամուրեան էֆենտի արդիւնքն 140 էրեսէ բաղկացեալ նոր գործը...

ՄԻՆՍՍ ՁԵՐԱԶ

Թէ Ինչ ՇՈՂԵՆԱԻՆՆԵՐ ՊԵՐԼԻՆԻ ՎԵՂՆԱՐԻՆԻ

Հայ պատուիրակութեան քարտէս

Table with 3 columns: No., Name, and Amount. Lists names and values in the top right section.

ԿԱՄՈՒՐՔԵՆ ԵՆՆՈՂ ՇՈՂԵՆԱԻՆՆԵՐԸ

ԵՐԿՈՒՇՄԱՐԹ ԵՂԵՐԷ

Table with 3 columns: No., Name, and Amount. Lists names and values in the Kamurkhen section.

ԱՐՆՈՒՄ ԵՂԵՐԷ

Table with 3 columns: No., Name, and Amount. Lists names and values in the Arnum section.

ԱՐՆՈՒՄ ԵՂԵՐԷ

Table with 3 columns: No., Name, and Amount. Lists names and values in the Arnum section.

Ամեն երկուշաբթի (բացի սոսի) առաւօտ ժամ 2 1/2ին լինելու մասնակցէն շարքէն...

Կ Ի Յ Լ Օ Մ Թ Է Լ Լ ՈՂԵՆԱԻՆՆԵՐԻՆ Ի ՀԻՆԳ ԲԱՐՈՍԱԹԱՐԻ ԹԱՐԳՄԱՆԵԱՅ ԳԱՂՈՒՆԵՐԵՆԷ Մ. Ա. ԱԿՆԱՅԵԱՆ Մեղաւ քարտուղարաց զիւանին արտաքին գործոց պաշտօնատան որ ՚ի Բ. Գուան Շիրէր Գերմանացի հռչակաւոր հեղինակին ընտիր գործերէն մին է...

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի բաց ՚ի կերակրէ և տան օրերէ: Բաժանորդաց բաժնեւորներն է Գալաթի Սանտրոզըրար Ճատտէսի թիւ 193, Կորս խան Մարտի խմբագրատունը: Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց գրասենեակները: ՉՄԻՆՈՒՆԻՍ. Ստեփան էֆ. Տէտէեան. ՆԻԿՈՒՄԻՆԻ. Խորով է Եսկիճեան. ՊՐՈՒՍՍ. Ստեփան էֆ. Թանկեան. ՌՈՏՈՍՏՈ Արթ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Ֆելեան. ՍԳՐԱՆՈՒՊՈՒՊՈՒՍ. ՍՄԱՐՏԻՆ. ՏՐԱՊԵՏՈՒՆ. ՍԵՆԱՍԻՍ. ԵՆԿՈՒԿԻՍ. ԽԱՐԵՐԻ. ԵՐԶԵՍ. Թաղու էֆ. Բաղրատունի. ԿՈՐԻՆ. Կարապետ Չաքարեան. ՄՈՒՇ. Մղաղէ Փօթիկեան. ՎԱՆ. ԲԵՐԻՍ. Սեղրակ Սարգսեան. ՏԻՊՈՒՆԱԿԵՐՏ. Թորոս էֆ. Փափազեան. ԵՂԵՍԻՍ. ՄՈՐԱՇ. ՅՈՒՇՈՒՆ. Յերհատ աղա Ս. Յերհատեան. ՏՓԻՍ. Պ. Նիկողոս Տ. Ղեւոնդեան. ԿԱԿԱՐԱՆ. Պետրոս աղա Հիլիմեան: